Հաստատված է

Դպրոցի տնօրեն Նոնիրա Տողանյան

01 սեպտեմբեր 2023թ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցի

<<Տարրական դասարանների>>

մեթոդմիավորման տարեկան

աշխատանքային պլան

2023-2024 ուստարի

Մեթոդմիավորման նախագահ Կարինե Չիբուխչյան

Տեղեկություններ ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցի 2023-2024 թթ. ուստարվա տարրական կրթության մեթոդական միավորման կազմի մասին:

Ազգանունը, անունը, հայրանունը	Ծնն.թիվ	Կրթ.	Ստաժը	Ի՞նչ առարկա է դասավանդում	Դաս.	ժամ
1.Չիբուխչյան Կարինե	1965	Բարձր	36	Մաթեմ.,Մայրենի, Տեխնոլոգիա	III	14
2. Հովհաննիսյան Ագրաֆինա	1964	Բարձր	37	Մաթեմ.,Մայրենի, Տեխնոլոգիա Ես և շրջակա աշխարհը	IV	15
3. Աբրահամյան Տաթևիկ	1969	Բարձր	34	Մաթեմ.,Մայրենի, Ես և շրջակա աշխարհը	II IV	26
4. Գրիգորյան Աննա	1981	Բարձր	21	Մաթեմ.,Մայրենի, Տեխնոլոգիա,	I	13
5. Սոսիկյան Հասմիկ	1983	Բարձր	7	Մաթեմ.,Մայրենի, Տեխնոլոգիա, Ես և շրջակա աշխարհը	III	14
6. Ադիլխանյան Սյուզաննա	2000	Բարձր	0	Մաթեմ.,Մայրենի, Տեխնոլոգիա	I	13
7. Դավթյան Ռուզաննա	2000	Բարձր	1	Մաթեմ.,Մայրենի,Տեխնոլոգիա, Ես և շրջակա աշխարհը, ՏԳՀՏ	II	16
8. Բարեղամյան Ազնիվ	1987	Բարձր	8	Երաժշտություն	I -VI	14,5
9. Գրիգորյան Զորի	1988	Բարձր	0	Կերպարվեստ	I -IV	14,5
10. Կարապետյան Արմինե	1980	Միջին մասն.	4	Շախմատ	II - IV	12
11. Ադամյան Օլյա	1994	Բարձր.	5		I -IV	
12. Պետրոսյան Աննա	1971	Բարձր.	6		I -IV	
13. Մելքումյան Ասյա	1977	Բարձր	11		I -IV	

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

▪ Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել բոլոր առարկաների դասավանդումը դպրոցում, կիրառելով դասավանդման ժամանակակից նորարարական մոտեցումներ:

• Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտների կիրառական և վերլուծական կարողությունների զարգացմանը՝ ի հակադրություն պարզապես փաստային գիտելիքի մեխանիկական կուտակման և վերարտադրման: Լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները:

• Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

• Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի և խմբային աշխատանքների կազմակերպմանը:

• Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

• ՈՒսումնասիրել կրթության վերաբերյալ համացանցում (օրինակ, lib.armedu.am կայքում) տեղադրված համապատասխան նյութերը և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվեվությունների և բաց դասերի միջոցով:

• Ուսուցիչների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր ընդունակությունների և հնարավորությունների չափով ակտիվ մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

• ՈՒսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

Մեթոդմիավորման աշխատանքների տարեկան պլան

№	Թեման, բովանդակությունը	Ամսաթիվը	Պատասխանատուները
1.	1. Մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում: 2. Տարրական դասարանների ուսուցիչների մեթոդմիավորման 2023-2024թթ. ուստարվա պլանի քննարկում և հաստատում 3. Մեթոդմիավորման նոր կազմի ներկայացում և քարտուղարի ընտրություն 4. Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման առաջարկությունների մշակում: 5. Թեմատիկ պլանների քննարկում և ներկայացում տնօրենի հաստատմանը: 6. Սովորողներին դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ ապահովելու հետ առնչվող խնդիրների քննարկում: 7. Փոխադարձ դասալսումների քանակի որոշում 8. Բանավոր, գործնական և թեմատիկ աշխատանքների թվի որոշում: 9. Էլեկտրոնային մատյանների գրանցման, գնահատման, բացակայությունների հարցի քննարկում: 10. Դասալսման ձևաթղթի ձևանմուշի քննարկում: Դասի պլանի առկայության և կատարման վերահսկման եղանակների քննարկում: 11. Մանկավարժական զեկուցումների, բաց դասերի, վարպետության դասերի, արտադասարանական միջոցառումների ժամանակացույցի կազմում:	**Օգոստոս**	ՄՄ նախագահ
2.	1. Նոր ՀՊՉ-ի համապատասխան ուսումնական ծրագրերի, դասագրքերի, նոր մեթոդական ուղեցույցների քննարկում: 2. Ծանոթացում նոր գնահատման կարգին՝ ըստ ՀՊՉ-ի:	***Սեպտեմբեր***	ՄՄ նախագահ
3.	1.Դասալսումներ սկսնակ ուսուցիչների մոտ. կարիքների վերհանում և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպում այդ կարիքները բավարարելու ուղղությամբ: 2.Հայտորոշիչ գրավոր աշխատանքներ 2-4-րդ դասարաններ: 3. Առաջին դասարանցիներին դպրոցին հարմարեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների դիտարկում:	***Հոկտեմբեր***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ

	4.Հետ մնացող աշակերտների դժվարությունների ուսումնասիրում։ 5.Փոխադարձ դասալսումների միջոցով 2-4-րդ դասարաններում։ նպատակը՝ ուսուցման միջոցների, ձևերի, մեթոդների և հնարների ընտրության դիտարկում, դիտարկման արդյունքների վերլուծություն մ/մ նիստում։ 6.Դասարանական և արտադասարանական միջոցառումների կազմակերպում։		
4.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում 2. Փորձառու ուսուցիչների կողմից սկսնակ ուսուցիչների խորհրդատվության կազմակերպում։ 3. «Մաթեմատիկա» առարկայի միամսյակ և մաթեմատիկայի դրվածքի ուսումնասիրում։ 4. Փոխադարձ դասալսումների ընթացքում սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով խաղային իրավիճակների օգտագործման դիտարկում։ 5. Գործնական դաս «Խաղային տեխնոլոգիաները տարրական դասարաններում»։ 6. Կարդալու տեխնիկայի ստուգում II-IV դասարաններում 7. Աշխատանք օժտված երեխաների բացահայտման և նրանց ունակությունների զարգացման ուղղությամբ 8. 3-4-րդ դասարանի սովորողներին «Մեղու» մրցույթին մասնակցության ապահովում։ 9. Արտադասարանական միջոցառումներ։ 10. Մանկավարժական զեկուցում	***Նոյեմբեր***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ
5.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում 2. «Տեխնոլոգիա» առարկայի միամսյակ, դրվածքի ուսումնասիրում։ 3. Փոխադարձ դասալսումների ընթացքում ուսուցման գործընթացում առարկայի նկատմամբ հետաքրքրության ձևավորման ու հետաքրքրասիրության զարգացման դիտարկում, մ/մ նիստում քննարկում։ 4. Համադպրոցական գրավոր աշխատանքներ 2-4-րդ դասարաններում։	***Դեկտեմբեր***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ

	5. Ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծություն 6. Ուսուցիչների I կիսամյակի հաշվետվությունների ներկայացում, կատարած աշխատանքների վերլուծում, ամփոփում 7. Ծրագրի կատարողականի վերլուծություն 8. Բաց դասեր 9. Միջոցառումներ 10. Զեկուցում		
6.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում 2. Վարպետության դասեր «Խմբային աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում» թեմայով։ 3. Փոխադարձ դասալսումների ընթացքում խմբային աշխատանքների կատարման դիտարկում։ 4. Մանկավարժական զեկուցում 5. Բաց դասեր 6. Միջոցառումներ	***Հունվար***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ
6.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում 2. Մայրենիի միամսյակ և մայրենիի դրվածքի ուսումնասիրում/Թումանյանական օրեր, գրքի նվիրատվության օր/ 3. Փոխադարձ դասալսումների միջոցով սովորողների ընթերցանության կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների դիտարկում։ 4. Կարդալու կարողությունների ստուգում և արդյունքների վերլուծություն։ 5. Վարպետության դաս «Գծագրական դասակարգիչները մայրենիի դասերին» թեմայով։ 6. Մանկավարժական զեկուցում 7. Բաց դաս 8. Միջոցառումներ	***Փետրվար***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ
7.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում	***Մարտ***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ

	2. «Երաժշտություն», «Շախմատ» և «Կերպարվեստ» առարկաների միամսյակ և երաժշտության, կերպարվեստի դրվածքների ուսումնասիրում։ 3. Փոխադարձ դասալսումների ընթացքում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների դիտարկում։ 4. 3-4-րդ դասարանի սովորողներին «Կենգուրու» մրցույթին մասնակցության ապահովում։ 5. Մանկավարժական զեկուցում, գործնական սեմինարներ 6. Բաց դաս 7. Միջոցառումներ		
8.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում 2. Գրաճանաչության ստուգումը առաջին դասարաններում։ 3. Դասալսումներ չորրորդ դասարաններում՝ գիտելիքների գնահատման նպատակով։ 4. Փոխադարձ դասալսումներ սովորողների ինքնուրույնության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների դիտարկում։ 5. Գրավոր աշխատանքներ IV դասարաններում տնօրենության կողմից սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները ստուգելու նպատակով։ 6. Մանկավարժական զեկուցում 7. Բաց դաս 8. Միջոցառումներ	***Ապրիլ***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ
9.	1. Ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում 2. Փոխադարձ դասալսումների ընթացքում խմբային գործնական աշխատանքների դիտարկում, մ/մ նիստում քննարկում 3. II-III դասարաններում գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից՝ սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները ստուգելու նպատակով, • Ա.մայրենի • Բ. մաթեմատիկա	***Մայիս***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ

	5. Նախապատրաստվել գիտելիքների ստուգմանը՝ քննասենյակների կահավորում, պաստառների, սլաքների տեղադրում, սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում 6. Ծրագրերի կատարողականության ստուգում 8. 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու նպատակով քննություններ կազմակերպելու մասին 9. Կարդալու տեխնիկայի ստուգումը տարրական դասարաններում 10. Գիտելիքների ստուգման թեստերի կազմում 11. Զեկուցում 12. Բաց դաս 13. Միջոցառումներ		
10.	1. IV դասարաններում գիտելիքների ստուգում, ստուգման արդյունքների վերլուծություն 2. Ծրագրի կատարողականի վերլուծություն 3. Ուսուցիչների տարեկան հաշվետվությունների ներկայացում, կատարած աշխատանքների վերլուծում, ամփոփում 4. Տարրական դասարանների մեթոդմիավորման անդամների 2023-2024թթ. ուստարվա աշխատանքների վերլուծություն 5. 2024-2025թթ. մեթոդմիավորման աշխատանքների պլանի նախագծի քննարկում: 6. Նախնական դասաբաշխում	***Հունիս***	ՄՄ նախագահ ՄՄ անդամներ